ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Գ.ԴԱՇՏԱՎԱՆ

N 67-11
01 հուլիս 2011թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԻ և
ՀԳՄ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

2011թ. հուլիսի 1-ին կայացավ ՀՀ Արարատի մարզի Դաշտավան համայնքում հանրային լսումներ:
Լսումներին մասնակցում էին համայնքի ղեկավար Ս.Խաչատրյանը, համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը, աշխատակազմի առաջատար և առաջին կարգի մասնագետները, ավագանու անդամներ, կուլտուրայի տան մասնագետը , ՀՀ Արարատի մարզպետարանի ՏԿՎ-ն պետի տեղակալ Ա.Լալայանը և գլխավոր մասնագետ Հ. Առաքելյանը:
Քննարկվեցին համայնքի ղեկավար Ս.Խաչատրյանի կողմից ներկայացրած համայնքում առկա խնդիրները:Անդրադարձան առավել կարևոր խնդիրներին՝

1. Համայնքի դպրոցը, որը գտնվում է անմխիթար վիճակում և այն ենթակա է կապիտալ վերանորոգման:
2. Մանկապարտեզը չի գործում:Շենքը կառուցվել է 1950թ., մինչ օրս չի նորոգվել և այն գտնվում է քարուքանդ վիճակում:2007թ. Պետ. բյուջեի միջոցներով փոխվել է միայն կտուրը :
3. Ակոմբի շենքը և գրադարանը կառուցվել է 1965թ. նույնպես ենթակա են վերանորոգման և ունեն կահավորման կարիք:
4. Համայնքում առկա է ոռոգման ջրի խնդիրը: Համայնքի հողերի գրեթե 40%-ը չի ոռոգվում:Անհրաժեշտ է նորոգել համայնքի ոռոգման ներքին ցանցը:
5. Նոր Թաղամասերի գազաֆիկացում:

Համայնքի ղեկավար Ս.Խաչատրյանը ներկայացրեց Դաշտավան համայնքի 2011թ. բյուջեն՝ որի տարեկան եկամուտը կազմում է 34511,8 հազ դրամ, բյուջեն առաջին կիսամյակում կատարվել է 21384.4 հազ դրամ, որը կազմում է 61 %:
Սեփական եկամուտները տարեկան կազմում է 5640.0 հազ դրամ, 1-ին կիսամյակի հավաքագրումը կազմել է 352.0 հազ. դրամ որը կազմում է 62%-ը:
Պետ. բյուջեից 2011թ. դոտացիան կազմում է 21785.9 հազ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ